ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն _____Ա.Փիրումյան

<< 15 >> սեպտեմբեր 2022-23 ուստարի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ Տավուշի մարզի Աչաջրի Հ.Թամրազյանի

անվան միջն.դպրոցի 5 –րդ Բ

դասարանի դասղեկ՝ Դ.Աստանյան

2022-2023 ուստարի

ԿՐԹԱ_ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

5-ր դ Բ դասարանում սովորում են 22 աշակերտ՝ 15 տղա, 7 աղջիկ: Նրանք բոլորն էլ պարտաճանաչ աշակերտներ են: Բոլորն էլ ընկերասեր են և սիրում են ազատ ժամանակը միասին անցկացնել: Աշակերտներից ոմանք լավ ասմունքում են,ոմանք էլ՝ լավ երգում: Աշակերտների մի մասը սիրում է ազատ ժամանակն անցկացնել ընթերցանությամբ: Դասարանում իշխում է համերաշխությունը, հարգանքը միմյանց և ուսուցիչների հանդեպ:

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

1. Ուշադրություն դարձնել դասարանական կոլեկտիվի համախմբմանը:
2. Ապահովել անհատի ձևավորմանը նպաստող, յուրաքանչյուրի անհատականությունը ողջունող և ներուժը բացահայտող հոգեբանա- մանկավարժական միջավայր:
3. Ձևավորել բարյացակամ, ներդաշնակ փոխհարաբերություններ սովորողների, սովորողներին մանկավարժների միջև:
4. Ձևավորել առողջ ապրելակերպի վարքագիծ:
5. Դաստիարակել հայրենասիրություն, հարգանք մեծերի հանդեպ:
6. Ի հայտ բերել աշակերտների նախասիրությունները և ընդգրկել նրանց հասարակական աշխատանքներում:
7. Օգնել աշակերտներին զարգացնելու սեփական կարողություններն ու հմտությունները,ինչը կնպաստի նրանց՝ հետագայում հասարակության մեջ արդյունավետ ինտեգրմանը:

3. Հայեցի դաստիարակություն

3.1 Հոգևոր դաստիարակություն

Անհրաժեշտ է ձևավորել անձ, ով գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների , ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը, գիտակցի,որ գիտությունը, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտների մեջ ձևավորել գեղագիտական ճաշակ: Աշակերտը պետք է կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը: Կազմակերպել էքսկուրսիաներ, որոնք կնպաստեն աշակերտների գեղագիտական դաստիարակությանը:

3.3 Ռազմա -հայրենասիրական դաստիարակություն

Ձևավորել քաղաքացի, ով հարգի Հայաստանի պետական խորհրդանիշ.-ը, լինի հայրե- նասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Կազմակերպել աշակերտների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ: Աշակերտը պետք է մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Ձևավորել անձ, ով դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Դաստիարակել սեր հայրենի բնության հանդեպ: Ձևավորել անձ, ով գիտակցի բնության պահպանման, շրջակա միջավայրի չաղտոտման կարևորությունը:

3.7 Դպրոց -ընտանիք կապը

Սերտ կապ պահպանել ծնողների հետ, նրանց մասնակից դարձնել դպրոցի աշխատանքներին: Աշակերտը պետք է գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակու- թյան մեջ, դրսևորի արժանավայել պահվածք, գիտակցի ծնողների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը:

Դասի համարը	Դասի թեման
1.	Գիտելիքի ուժն
2.	Առողջություն, առողջ ապրելակերպ
3.	Իմ տունը
4.	Իմ ընտանիքը
5.	Մեր երկրի հերոսական անցյալը
6.	Ինչ է ընկերությունը և բարեկամությունը
7.	Ես և ուրիշները
8.	Վարվելակերպի ոճերը
9.	Հայաստանի զինանշանի և դրոշի պատմությունը
10.	Ուսումը և դրա անհրաժեշտությունը
11.	Բոլորս տարբեր ենք, բոլորս ապրում ենք միասին
12.	Ինչ են սովորեցնում մեզ Հ. Թումանյանի հեքիաթները
13.	Ինչպիսինն եմ ես
14.	Մեզ պետք են տարբերություններ
15.	Ինչ է կոնֆլիկտը
16.	Կոնֆլիկտների խաղաղ լուծման տարբերակներ
17.	Մարդիկ որոնց հանդիպում եմ ամեն օր
18.	Իմ հայրենիքի պատմության հայտնի էջերը
19.	Մեր երկրի օրհներգի ստեղծման պատմությունը

20.	Ժպիտը մարդու կյանքում
21.	Մաքուր պահենք բնությունը
22.	Ինչ է ազնվությունը
23.	Հետաքրքրասիրությունը լավ հատկանիշ է թե վատ
24.	Կենդանիները մարդկանց բարեկամներն են
25.	Իմ իրավունքները դպրոցում և պարտականությունները
26.	Աշխատասիրություն
27.	Հայտնի հայ մարզիկներ
28.	Ուժեղ լինել նշանակում է. . .
29.	Իմ հետաքրքրությունները և նախասիրությունները
30.	Ում եմ համարում գեղեցիկ մարդ
31.	Արդար,ազնիվ և օրինապահ
32.	Ինչ է ինձ համար դպրոցը
33.	Ինչ տվեց ինձ այս ուսումնական տարին
34.	Վերջին զանգի խորհուրդը